ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԿՎԱՐՏԵՏԸ

ԳՈՀԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հոդվածում քննության է առնվել կոմպոզիտոր Էդուարդ Հայրապետյանի «Դաշնամուրային կվարտետը», որն իր ուրույն տեղն է զբաղեցնում թե՛ կոմպոզիտորի և թե՛ հայկական կամերային-գործիքային երաժշտության մեջ:

Դաշնամուրային տրիոն (ջութակ, թավջութակ և դաշնամուր) կոմպոզիտորը գրել է 1981 թվականին, սակայն որոշ ժամանակ անց՝ 1998 թվականին այն վերափոխել է և դարձրել Դաշնամուրային կվարտետ (ջութակ, ալտ, թավջութակ և դաշնամուր): Դաշնամուրային կվարտետն ինքնատիպ է իր ձևակառուցվածքով. բացակայում է թեմատիկ զարգացումը՝ այսինքն վարիացիոն ձևում է: Վարիացիայի անցումը մյուսին քողարկված չէ, այլ հստակ երևում է:

Բանալի բառեր. *Էդուարդ Հայրապետյան, Դաշնամուրային կվարտետ, վարիացիոն ձև, թեմատիզմի բացակայություն, օկտավա, օբերտոն:*

Ներածություն

Էդուարդ Հայրապետյանն արդի հայ կոմպոզիտորական դպրոցի վառ ներկայացուցիչներից է: Հիմնվելով եվրոպական դասական և հայկական պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթների վրա, սինթեզելով ժամանակակից մեղեդային լեզվի տարրերը (ժողովրդական, ժողովրդա-պրոֆեսիոնալ), ինչպես նաև մեծ հետաքրքրությամբ արձագանքելով ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության ենթակառուցվածքներին՝ նա հարթեց իր կոմպոզիտորական ուղին: XX դարում Հայաստանի կոմպոզիտո-

րական ստեղծագործական կյանքն իր պատմության ծաղկումն էր ապրում: Էդուարդ Հայրապետյանն այն կոմպոզիտորների թվում է, որոնք իրենց ստեղծագործություններով արժանանում են թե՛ կատարողների և թե՛ ունկնդիրների ուշադրությանը:

Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործությունները հաջողությամբ հնչել են թե՛ բազմաթիվ միջազգային փառատոներում՝ Բուդապեշտում, Զագրեբում, Շվեդիայում, Սալոնիկում, Օդեսայում, Բեռլինում, թե՛ միջազգային հեղինակավոր բեմահարթակներում՝ Եվրոպայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մերձբալթյան պետություններում, Կիպրոսում, Լիբանանում: Կոմպոզիտորն արժանացել է Հայաստանի կոմպոզիտորների միության և ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, «Թեքեյան» մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակի: Էդուարդ Հայրապետյանը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ է: 2018 թվականին արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Էդուարդ Հայրապետյանը բազմաժանր կոմպոզիտոր է, նա հեղինակել է չորս սիմֆոնիա, «Յոթ խաղաղ խոսք» կանտատ, ութ վոկալ շար («Հայր մեր», «Ինչ արբեցությամբ», «Մտերմիկ տեսիլներ», «Ըլլայի, ըլլայի», «Ձրտուք»), քսանհինգ գործիքային և կրկնակի կոնցերտներ, որոնք գրված են տարբեր գործիքների համար (ֆլեյտա, հոբոյ, կլարնետ, ֆագոտ, հարվածային, դաշնամուր, ջութակ, ալտ, թավջութակ), քսան գործիքային սոնատ և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Էդուարդ Հայրապետյանի երաժշտության փոփոխվող ժամանակը, մտորումների գույները, ձևերը միշտ լսելի են և համահունչ ժամանակակից կյանքի ռիթմերին: Կոմպոզիտորի երաժշտությունը կարող է չունենալ կոնկրետ բովանդակություն և կերպարներ, բայց հարուստ է փիլիսոփայական գաղափարներով: Կոմպոզիտորի ստեղծագործական կյանքը միշտ լի է ինքնակատարելագործումով, նոր գիտելիքների ձեռքբերմամբ, որ բավարարվում է ընթերցված գրքերով, ինչպես նաև երաժիշտ-կատարողների հետ ստեղծագործական սերտ կապով: Հայրապետյանի երգացանկում մեծ տեղ

են զբաղեցնում նվիրումները, որոնք պայմանավորված են հայ կատարողների՝ Մեդեա Աբրահամյանի, Բագրատ Վարդանյանի, Ալեքսանդր Կոսեմյանի, Նարեկ Հախնազարյանի, Մերուժան Սիմոնյանի, Արամ Ղարաբեկյանի, Սերգեյ Սմբատյանի, Սվետլանա Նավասարդյանի, Նարե Արղամանյանի վարպետությամբ և տաղանդով:

2016 թվականին «Պավանա» սիմֆոնիկ պատկերը, որպես պարտադիր կատարվող ստեղծագործություն, ընդգրկվել է Արամ Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային մրցույթի «Դիրիժորություն» մասնագիտության ծրագրում:

2017 թվականի փետրվարի 28-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված Կոնցերտի պրեմիերան՝ դաշնակահարուհի Նարե Արղամանյանի և Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ: Այս ստեղծագործությունն առիթ դարձավ՝ Էդուարդ Հայրապետյանին ՀՀ պետական մրցանակի առաջադրելու համար:

Հիմնական նյութի շարադրում

Էդ. Հայրապետյանը վաղ տարիքից մեծ հետաքրքրություն ցուցաբերեց դեպի երաժշտությունը. նվագում էր ակորդեոն և երգում դպրոցի երգչախմբում: Երգչախմբի ղեկավարը, տեսնելով տղայի ընդունակությունները, խորհուրդ է տալիս նրան՝ ընդունվել երաժշտական դպրոց: Շուտով Էդ. Հայրապետյանն ընդունվում է Երևանի Տիգրան Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց: Այդ ժամանակ դպրոցում բացվում է կոմպոզիտորական դասարան, և դպրոցի տնօրեն Ձեմմա Սարգսյանը հրավիրում է դասավանդելու Գևորգ Արմենյանին, ում կոմպոզիտորական դասարանում էլ Էդուարդ Հայրապետյանը սովորում է կոմպոզիցիա:

Դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվում է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան՝ Գևորգ Հախինյանի կոմպոզիտորական դասարան: Ավարտելով ուսումնարանը՝ նա ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա՝ իր Դաշնամուրային տրիոյով:

Գրիգոր Եղիազարյանի դասարանում Էդուարդ Հայրապետյանի հետ սովորում էին նաև Վահրամ Բաբայանը, Երվանդ Երկանյանը, Ռուբեն Սարգսյանը, ինչպես նաև արդեն կոնսերվատորիան ավարտողներ Մարտուն Իսրայելյանը և Աշոտ Ջոհրաբյանը: Այդ դասարանում սովորող տաղանդավոր, երիտասարդ կոմպոզիտորները, իրենց կողմից ստեղծագործաբար յուրացրած՝ ժամանակակից երաժշտության լեզվի տարրերը ներդրեցին հայ երաժշտության մեջ, որի վրա մեծ ազդեցություն ունեցավ XX դարի 50-60-ական թվականների Արևմտյան Եվրոպայի երաժշտությունը: Եվ այդ տարիներին Հայաստանում կամերային-գործիքային ժանրն ունեցավ մեծ զարգացում[1]:

Հայկական կամերային-գործիքային երաժշտության մեջ մենք հազվադեպ ենք հանդիպում դաշնամուրային կվարտետի, քանի որ կվարտետները հիմնականում գրվում էին լարային կազմի համար. նկատի ունենք Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի և մի շարք այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Էդուարդ Հայրապետյանի կամերային-գործիքային ստեղծագործությունների ցանկում (Դաշնամուրային տրիո՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար (2014), Կվարտետ՝ ջութակի, ալտի, թավջութակի և դաշնամուրի համար (1981-1998), «Բնապատկեր սարով» կվարտետ՝ ֆլեյտայի, կլարնետի, ֆագոտի և դաշնամուրի համար (2016), Սյուիտ ֆլեյտայի համար, 5 հարվածայինների և դաշնամուրի համար (1976), «Երկխոսություն»՝ ջութակի և դաշնամուրի համար (1995), «Թիթեռների օրը»՝ ալտի և դաշնամուրի համար (2019), Սոնատ ֆլեյտայի և դաշնամուրի համար (2005), Սոնատ հոբոյի և դաշնամուրի համար (2005), Սոնատ կլարնետի

[1] Տե՛ս М. Рухкян, *Время Эдуарда Айрапетяна*, Ереван, 2020, с. 10.

և դաշնամուրի համար (2005), Սոնատ ֆագոտի և դաշնամուրի համար (2005), Սոնատ № 1 ջութակի և դաշնամուրի համար (1972), Սոնատ № 2 ջութակի և դաշնամուրի համար (1980), Սոնատ № 3 ջութակի և դաշնամուրի համար (1982), Սոնատ № 4 ջութակի և դաշնամուրի համար (1992), Սոնատ 2 ջութակի և դաշնամուրի համար (1988), Սոնատ № 1 ալտի և դաշնամուրի համար (1980), Սոնատ № 2 ալտի և դաշնամուրի համար (1983), Սոնատ № 3 ալտի և դաշնամուրի համար (1986), Սոնատ № 4 ալտի և դաշնամուրի համար (2006), Սոնատ № 5 ալտի և դաշնամուրի համար (2016), Սոնատ № 1 թավջութակի և դաշնամուրի համար (1980), Սոնատ № 2 թավջութակի և դաշնամուրի համար (1984) հատուկ տեղ է գրավում Դաշնամուրային կվարտետը:

Բնորոշ է այն փաստը, որ այս ստեղծագործությունն սկզբում՝ 1981 թվականին, գրվել է որպես Տրիո՝ ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար: Սակայն որոշ ժամանակ անց կոմպոզիտորը նորից անդրադարձել է Տրիոյին և 1998 թվականին վերանայել՝ այն վերածելով Դաշնամուրային կվարտետի: Ստեղծագործության հարմոնիկ լեզուն և ֆակտուրան հարստացան ալտի ներգրավմամբ: Հետաքրքիր է, որ կոմպոզիտորին Դաշնամուրային տրիոն չէր գոհացնում, և դա էր պատճառը, որ մի քանի տարի անց վերանայեց և նորովի ներկայացրեց ունկնդրին:

Ինչպես խոստովանում է կոմպոզիտորը. *«Երկար տարիներ են պահանջվել, որպեսզի այս ստեղծագործությունը վերջնական ձևով ներկայացնեմ, քանի որ Կվարտետի երկրորդ մասը կերպարային առումով չէր համապատասխանում առաջին և երրորդ մասերին»*[2]:

Տրիոն առաջին անգամ կատարվել է Կիևում, 1984 թվականին, իսկ որպես Դաշնամուրային կվարտետ՝ առաջին անգամ հնչել է 2016 թ. Գյումրիի «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնին՝ Գևորգ Գասպարյանի (ջութակ), Անիտա Բայանդուրի (ալտ), Նարեկ

[2] Էդուարդ Հայրապետյանի հետ ունեցած անձնական զրույցից:

Գասպարյանի (թավջութակ) և տողերիս հեղինակի (դաշնամուր) կատարմամբ՝ արժանանալով առաջին կարգի մրցանակի:

Մրցույթին, որին մասնակցում էին ինչպես Հայաստանի, այնպես էլ ԱՄՆ-ի, Էստոնիայի, Ռուսաստանի ներկայացուցիչներ, անհրաժեշտ էր երկու ստեղծագործություն. առաջին ստեղծագործությունն ըստ մասնակիցների ցանկության՝ մենք ընտրեցինք Յոհաննես Բրամսի Դաշնամուրային կվարտետը՝ op. 25, g moll: Իսկ երկրորդը՝ որպես մասնակից անդամների երկրի ստեղծագործություն՝ ընտրեցինք Էդուարդ Հայրապետյանի Դաշնամուրային կվարտետը: Շատ մեծ դժվարությամբ ԵՊԿ պրոֆեսոր Իրինա Բաղալյանը գտավ այն: Կոմպոզիտորը մեզ փոխանցեց Կվարտետի նոտաները, և սկսեցինք պարապմունքները: Որոշ ժամանակ անց մենք խնդրանքով դիմեցինք, որպեսզի կոմպոզիտորը լսի մեր կատարումը և ուղղություն ցույց տա: Էդուարդ Հայրապետյանի հետ պարապմունքների շնորհիվ մեկ այլ տեսանկյունից մոտեցանք այս ստեղծագործությանը:

Կոմպոզիտորը դաշնամուրային կվարտետը գրել է երիտասարդ տարիքում: Նկատելի են շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների հետ կապված էմոցիոնալ ընկալումները: Դաշնամուրային կվարտետում կոմպոզիտորն օգտագործել է հարուստ ֆակտուրա, դինամիկա, ռիթմ և խրոմատիկ շարադրանք, որոնց շնորհիվ ստեղծագործությունը դառնում է ավելի ցայտուն, գունեղ, ինչպես նաև փոխանցում է կերպարների ինքնատիպությունը: Կոմպոզիտորը կվարտետում օգտագործել է այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ յուրաքանչյուր գործիք կարողանում է ցուցադրել իր հնարավորությունները: Հատկանշական է, որ կոմպոզիտորը Կվարտետի մասերում հրաժարվում է տեմպերի անվանումներից, այլ միայն նշվում է. քառորդը հավասար է MM 138 զարկին (նոտային օրինակ 1):

Դաշնամուրային կվարտետը կազմված է երեք մասից: Կվարտետի առաջին մասը գրված է վարիացիոն ձևում: Կվարտետը յուրահատուկ է իր ձևակառուցվածքով: Առաջին մասում բացակա-

յում է թեմատիկ զարգացումը, այսինքն՝ զարգացումը վարիացիոն է: Վարիացիայի անցումը հաջորդ վարիացիային քողարկված չէ, այլ հստակ երևում է: Կվարտետի առաջին մասն սկսվում է լարային գործիքների հզոր ff-ով, շեշտված ֆակտուրայով, իսկ դաշնամուրի մոտ fff, որի դինամիկան աստիճանաբար մարում և հասնում է pp-ի: Դաշնամուրի նվագաբաժնում ակորդները պահում են լարվածությունը, հասցնում են նորից պոռթկուն ff-ի: Այս դինամիկ կտրուկ փոփոխություններն արտահայտում են կոմպոզիտորի հոգեվիճակը, ապրումները, ըմբոստացումը, հակադրում են հզորությունը նուրբ և հանգիստ կերպարներին, որոնց երկխոսությունից էլ ծնվում է լարվածությունը:

Այնուհետև սկսվում է հաջորդ վարիացիան, որից հետո տեղի է ունենում չափերի փոփոխություն. 4/4-ը փոխվում է 3/4-ի: Կերպարային առումով երաժշտությունը դառնում է ավելի տոնական և կենցաղային: Այդ կերպարին մոտենալու համար կոմպոզիտորն օգտագործել է դիսոնանս ինտերվալներ, գլիսանդոներ, ակորդներ, տրիելներ, col legno: Գործիքները հանդես են գալիս միասին, ունիսոն, խրոմատիկ տրիոլներով, շեշտված կանոնիկ շարադրանքով, խրոմատիկ գամմայաձև շարժումները դեպի վեր են անցնում հերթականությամբ բոլոր գործիքների նվագաբաժիններում՝ երաժշտությունը դարձնելով ավելի սուր և դրամատիկ: Այս մասում կատարողական բարդություններից է լարային գործիքների նվագաբաժնում ինտերվալների շարադրանքը. վերևի օկտավաներից մեծ թռիչքներով ներքև՝ արագ տեմպում, այս ամենին ավելանում է կանոնիկ շարադրանքը, որտեղ շատ կարևոր է ջութակահարի դերը՝ մուտքերը ցույց տալու համար (նոտային օրինակ 2): Ինչպես նշեց կոմպոզիտորը՝ այսպիսի հատվածներում հարկավոր չէ փափկացնել ինտերվալները, ինչպես նաև պետք է շատ մեծ կարևորություն տալ շեշտերին:

Վարիացիան ավարտվում է pp-ով, այնուհետև փոքր դադարից հետո սկսվում է հաջորդ վարիացիան՝ ff-ով, այստեղ կոմպոզիտորն օգտագործել է ոչ միայն դադար, այլ նաև դինամիկայով տարանջատել է վարիացիաները միմյանցից:

Այնուհետև տեղի է ունենում տրամադրության փոփոխություն, կրկին կտրուկ և չոր ինտերվալներով ի հայտ է գալիս չափի փոփոխություն, ավելի թափանցիկ ֆակտուրա, որն իր բնույթով կապող օղակ է հանդիսանում դեպի բարձրակետը: Առաջին մասի բարձրակետը հասնում է սկզբում հնչած շեշտված ակորդներից վերցված, բայց ավելի հզոր դինամիկ ակորդներով, որոնք ապահովում են կառուցվածքի ամրությունը՝ ինչպես ճարտարապետության մեջ այունը: Բարձրակետը կառուցված է չոր և շեշտված դիսոնանս ակորդների հարմոնիայի վրա, սակայն ավելի ուժգին, ինչը բնորոշ է բարձրակետին: Լարվածությունը հասնելով բարձրակետին՝ աստիճանաբար խաղաղվում, հանգստանում է, դանդաղում է տեմպը, մարում, ապա նորից fff հնչողություն, և հանդարտվելով՝ ավարտվում է առաջին մասը: Վերոհիշյալ նկարագիրը թույլ է տալիս ենթադրություններ անել կոմպոզիտորի կոնստրուկտիվ մտածելակերպի մասին, որի մեջ երևում է գեղեցիկի և էսթետիկ կերպարների հետաքրքիր համադրությունը:

Էդուարդ Հայրապետյանը Կվարտետի երկրորդ մասը ենթարկում է ձևափոխությունների: Սկզբում այն կերպարային բնույթով չէր համապատասխանում կվարտետի առաջին և երրորդ մասերին, ուստի կոմպոզիտորը երկրորդ մասը դարձրեց մեդիտացիոն: Այդուհանդերձ, նկատի է առնված ոչ թե բուդդայական մեդիտացիան, որտեղ մարդու միտքն անջատվում է բանականությունից, այլ մարդու հուզական և խորն ապրումները, որոնք իր մեջ պահելով՝ ստեղծվեց ավելի դրամատիկ կերպար. վերջինս կապված է ներքին լարման հետ և ունկնդրին ստիպում է լարված սպասել ստեղծագործության հետագա զարգացմանը:

Երկրորդ մասն սկսվում է լյա բեմոլ նոտայով բոլոր գործիքների նվագաբաժնում (նոտային օրինակ 3), որն իր մեջ պարունակում է

գաղտնիություն, նկարագրում է մարդու հոգեվիճակը: Ի հայտ է գալիս ոչ թե երկրային, այլ ավելի խորը երկնային մի ամբողջ աշխարհ, ինչն ավելի է հաստատում լարայինների մեղմոցով սկսելը:

Եվրոպական դասական երաժշտության մեջ օկտավան հաստատում է տոնայնությունը, իսկ հայկական երաժշտության մեջ ցույց է տալիս օբերտոնները: Բայց այստեղ օկտավան մեկ այլ դեր ունի, ինչպես վերը նշեցինք: Կոմպոզիտորը հիմա էլ է օգտագործում օկտավաներ, նախավերջին սիմֆոնիայի ֆինալում, ինչպես նաև կոնցերտում: Կարծես թե օկտավան կանգնած է, բայց այդ օկտավայի մեջ կա ներքին կուտակում, լարվածություն, որի մեջ տրիոլները crescendo-ով ու diminuendo-ով ավելի արտահայտված տենուտոներով և ռուբատոներով զարգանալով հասնում են ff-ի (նոտային օրինակ 4): Այս մասում դինամիկայի նշանները կատարողներից մեծ վարպետություն են պահանջում: Կվարտետում բոլոր գործիքների մոտ դրված են դինամիկայի նույն նշանները, ինչը պետք է կատարել շատ հմտորեն և ճիշտ չափաբաժիններով, որպեսզի դինամիկ կերպարը փոփոխության չենթարկվի:

Այնուհետև երկար ֆերմատայից հետո շարունակվում է սի բեմոլ՝ օկտավայով, որը երաժշտությունը դարձնում է կենդանի, ճկուն և շարժուն: Լարայինների մոտ մեղեդու անցումները կարծես ֆուգայի տարրեր լինեն, որ մշակվում և զարգանում են: Երկրորդ մասի վերջում արդեն հանդես է գալիս ռե օկտավան, որը հանգստացնում, ամփոփում է երկրորդ մասը՝ միևնույն ժամանակ այն կապող օղակ է հանդիսանում լյա բեմոլ և սի բեմոլ օկտավաների համար:

Երրորդ մասը հակադրումն է երկրորդ մասին. այն ավելի ակտիվ է, կատաղի, ներքին կուտակումների բաց թողումով, չորությամբ և սրությամբ: Եթե առաջին մասում էպիզոդներ կան, որոնք ավելի հանգիստ բնույթի են, որի շնորհիվ հանդարտվում է երաժշտությունը, ապա երրորդ մասում կոմպոզիտորը դրա հնարավորությունը չի տալիս: Դաշնամուրն սկսում է ff ակորդներով, մեծ էներգիայով՝ օգտագործելով շեշտեր յուրաքանչյուր ակորդի վրա, զանազան

ակորդներ, ֆլաժոլետներ: (նոտային օրինակ 5):

Յուրաքանչյուր ակորդի վրա դրված են շեշտեր, որպեսզի կերպարը և կառուցվածքը չփոխվեն: Օգտագործված գլիսանդոները լարայինների մոտ դառնում են անկանոն, իսկ դաշնամուրի մոտ՝ վարընթաց շարժումով, բայց մեղեդիական գիծը շեշտելով: Այս մասում կատարողական խնդիրներից են լարայինների նվագաբաժնում գլիսանդոները, որոնք կատարելիս հարկավոր է պահել ռիթմը: Պատահական չէ, որ կոմպոզիտորը դաշնամուրի բաժնում տասնվեցերորդական նոտաների վրա դրել է շեշտեր, որոնք հիմք են դառնում լարայինների համար՝ պահել ռիթմը (նոտային օրինակ 6):

Ստեղծագործությունը որքան ընթանում է դեպի վերջաբան, այնքան տեմպն աստիճանաբար արագանում է, ինչը բերում է ավելի անհանգիստ վիճակի: Լարայինների նվագաբաժնում սինկոպաները դառնում են ավելի ակտիվ և դուրս են գալիս վերահսկողությունից: Այնուհետև դաշնամուրն է դառնում հիմք լարայինների համար: Ստեղծագործության արագ տեմպը դանդաղում է, վերադառնում ենք սկզբնական տեմպին, կրկնվում է երրորդ մասի սկիզբը, բայց ավելի խտացված ֆակտուրայով, ֆլաժոլետներով, գլիսանդոներով, դուոդեցիմա ինտերվալներով, սինկոպաներով, որտեղ դաշնամուրը հիմք է դառնում լարայինների համար: Երրորդ մասի բարձրակետից հետո տեմպը դանդաղում է: Կարծես սա կոդա լինի երրորդ մասի համար. փոխվում է ֆակտուրան, հարմոնիկ լեզուն: Ի տարբերություն առաջին և երկրորդ մասերի՝ դաշնամուրն է եզրափակում երրորդ մասը:

Եզրակացություն

Դաշնամուրային կվարտետի կատարողական բարդություններից են. լարային գործիքների ինտերվալային ֆակտուրան տարբեր ինտերվալներով ընդհուպ մինչև դուոդեցիմա, նվագաբաժինները տարբեր օկտավաներում, գլիսանդոները, տարբեր ինտերվալներով ֆլաժոլետները: Իսկ դաշնամուրի նվագաբաժնում՝ ակորդային

ֆակտուրայում անհրաժեշտ է գտնել ճիշտ դինամիկան և մոտեցնել լարայինների հնչողությանը:

Անսամբլային կատարման բարդություններից են բոլոր մուտքերի կատարումը, ինչպես նաև կոմպոզիտորի կողմից դրված փոքր դադարներից հետո մուտք գործելը՝ ճիշտ հզորությամբ և ներքին էներգիայով: Կվարտետում կոմպոզիտորը թե՛ դինամիկ և թե՛ կերպարային փոփոխության ժամանակ կատարողներին տվել է փոքր դադարներ, դատարկ տակտեր և փոքր շնչեր, որպեսզի կարողանան ճիշտ կերպարով շարունակել: Երրորդ մասում լարայինների գլիսանդոների հստակ միմյանց փոխանցելը անհրաժեշտ է համադրել դաշնամուրի բաժնի շեշտված տասնվեցերորդական նոտաների հետ: Երրորդ մասի սինկոպաները միայն լարայինների բաժնում լի են կատարողական բարդություններով. ալտը և թավջութակը հիմք են հանդիսանում ջութակի համար, որի նվագաբաժինը համընկնում է թույլ մասերում: Այս կվարտետը կատարողներից պահանջում է շատ աշխատանք և կատարողական վարպետություն:

Լինելով Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կվարտետի առաջին կատարող, ես մեծ սիրով և հետաքրքրությամբ մոտեցա այս ստեղծագործությանը: Այս նյութը լի է նորարարական գաղափարներով, յուրատեսակ՝ գրելաձևով և կառուցվածքով, տարբեր տրամադրությունների և կերպարների առկայությամբ:

PIANO QUARTET BY EDUARD HAYRAPETYAN

GOHAR KARAPETYAN
PhD extern at the Institute of Art
National Academy of Sciences of Armenia

ABSTRACT

In this article we deal with the piano quartet of the composer Eduard Hayrapetyan. This musical work has its incomparable place both in the creative activity of the composer and in the Armenian chamber instrumental music. Eduard Hayrapetyan is one of the prominent representatives of the Armenian composer school. He created European classic music derived from Armenian professional musical traditions, synthesized contemporary melodic elements with folk and with folk - professional elements. He also responded with great interest to the contemporary professional musical structure and in this way created his own special composer way. In 1981 he created the Piano trio for violin, cello and piano. However, in 1988 he transformed the trio into the piano quartet (violin, viola, cello and piano). The Piano quartet is unique by its composition. It lacks the general thematic development, i.e. it is based on the mutual transition of the variations, which is expressed very brightly.

Key words: *Eduard Hayrapetyan, Piano quartet, form of variations, thematic lack, octava, overtone.*

ФОРТЕПИАННЫЙ КВАРТЕТ ЭДУАРДА АЙРАПЕТЯНА

ГОАР КАРАПЕТЯН
Соискатель Института искусств
Национальная академия наук Республики Армения

РЕЗЮМЕ

В данной статье мы рассматриваем Фортепианный квартет композитора Эдуарда Айрапетяна. Это произведение занимает свое неоспоримое место как в музыкальном творчестве композитора, так и в армянской камерной инструментальной музыке в целом. Эдуард Айрапетян - один из ярких представителей армянской композиторской школы. Он создал европейскую классическую музыку, берущую корни в армянских профессиональных музыкальных традициях, синтезировал современные мелодические элементы с народными и народно – профессиональными, а также с большой заинтересованностью откликнулся на современную профессиональную музыкальную структуру, тем самым создав свое собственное композиторское направление. В 1981 году он создал Фортепианное трио для скрипки, виолончели и фортепиано, однако спустя некоторое время, в 1998 году он преобразовал Трио в Фортепианный квартет (скрипка, альт, виолончель и фортепиано). Фортепианный квартет уникален по своей композиции. В нем отсутствует общее тематическое развитие, т.е. он основан на взаимопереходе вариаций, что не завуалировано а ярко проявляется.

Ключевые слова: *Эдуард Айрапетян, Фортепианный квартет, форма вариаций, отсутствие тематики, октава, обертон.*



Նոտային օրինակ 1



Նոտային օրինակ 2



Նոտային օրինակ 3



Նոտային օրինակ 4



Նոտային օրինակ 5



Նոտային օրինակ 6